ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆ (428-630-ական թթ.)

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.

Արշակունիների Հայոց թագավորության վերացումից հետո պահպանվեց նախարարական պետականությունը, որի հոգևոր-գաղափարական հենարանը Հայ առաքելադրոշմ եկեղեցին էր: Ազգային քրիստոնեական իրավահայեցողությամբ զինված Եկեղեցին կարողացավ ապահովել Հայաստանի հասարակության տարբեր խավերի հոգևոր-բարոյական համագոյությունը՝ էականորեն նպաստելով նրանց միասնությանը և գաղափարական ընդհանրությանը: Միասնական պետականության բացակայության պայմաններում Եկեղեցին թե՛ հայերի և թե՛ օտարների կողմից դիտվում էր որպես ժողովրդին միավորող համերկրային հիմնարկություն: Այն նաև նպաստում էր երկրի ավատատիրության զարգացմանը, նպատակասլաց ջանքերով համակարգում երկրի հոգևոր կյանքը և իրավահարաբերությունները:

Նախարարական իշխանություններում պահպանվող և օրենքի ուժ ունեցող՝ քրիստոնեացված սովորութային իրավունքը լրացվում էր զուգահեռ գործող՝ եկեղեցական-կանոնական իրավադրույթներով, որոնք շոշափում էին նաև աշխարհիկ ոլորտի խնդիրները: Եկեղեցու սահմանած կանոնական օրինադրույթները հաստատվում էին նրա գումարած ժողովներում՝ նախարարների գործուն մասնակցությամբ: Եկեղեցու ջանքերով Հայաստանն ունեցավ սեփական գրավոր իրավանորմեր ու իրավահայեցողություն, կասեցվեց զրադաշտական կրոնի ուծացնող ազդեցությունը, ինչն ուներ նաև քաղաքական հույժ կարևոր նշանակություն:

Նախարարությունների տարանջատվածության պայմաններում Հայոց կաթողիկոսի գերակայությունը տարածվում էր ոչ միայն ժողովրդի լայն խավերի, այլև նախարարների վրա՝ համախմբելով նրանց: Երկրի համար բախտորոշ նշանակություն ունեցող խնդիրները լուծելիս աշխարհիկ և հոգևոր իշխանությունները համատեղում էին իրենց ջանքերը: Եկեղեցին շահագրգռված էր նախարարությունների զորությամբ, քանի որ առանց դրա հնարավոր չէր պահպանել երկրի ու եկեղեցու ինքնուրույնությունն ու անվտանգությունը: Նախարարների տոհմական հողատիրույթների հաշվին ընդարձակվում էին վանական կալվածքները, զարգանում էր վանական ավատատիրությունը: Նախարարները հովանավորում էին Եկեղեցուն, քանի որ նրա միջոցով ամրապնդում էին իրենց իշխանության հոգևոր-բարոյական հիմքերը՝ մեծացնելով բնակչության վրա իրենց ազդեցությունը: Ուստի նախարարները հետևողական պայքար էին տանում Եկեղեցու հիմքերը խարխլող աղանդավորության, հատկապես պավլիկյանների և նրանց գաղափարական հետևորդներ թոնդրակյանների դեմ:

Վանքերն ու եկեղեցիները, գտնվելով նախարարներին ենթակա տարածքներում, օժտված էին ինքնուրույնությամբ և անձեռնմխելիությամբ: Եկեղեցու հանդեպ նախարարների իրավազորությունը սահմանափակ էր, այն մերձեցնում էր նրանց, նպաստում կողմերի համադաշն ընթացքին: Նախարարների գործուն աջակցությամբ զարկ տրվեց հայ մշակույթի, գրական ինքնուրույն արժեքների զարգացմանը և քրիստոնեական իրավախոհությանը: Եկեղեցականորեն կազմակերպվեցին նաև երկրի ծայրագավառները[1]: Դրանում աչքառու դեր էին խաղում գավառների նախարարներն իրենց եկեղեցանպաստ գործունեությամբ: Պատահական չէր, որ Կորյունը և մեր մյուս մատենագիրները հաճախ են շեշտում նախարարների բարեպաշտությունն ու վանքերի ու եկեղեցիների հանդեպ նրանց ցուցաբերած հովանավորությունը: Եղիշեի վկայությամբ, հայոց վերջին Արշակունի թագավորի գահընկեցությունից հետո Հայաստանը պահպանեց իր պետականությունը, քանզի «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն... Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց»[2]: Եկեղեցին իշխում էր հավատացյալներին՝ իր ձեռքում կենտրոնացնելով նաև գիտությունն ու գրականությունը, լուսավորությունը: Պաշտամունքի համակարգի մեջ էր մտնում նաև արվեստը:

Սասանյան արքունիքը, հաշվի առնելով Եկեղեցու մեծ ազդեցությունը, հայոց կաթողիկոսությունը դիտում էր նաև իբրև քաղաքական իշխանություն, կաթողիկոսին համարում «իշխան ամենայն քրիստոնէից»[3]: Իր հերթին, հայոց կաթողիկոսի համոզմունքով՝ գտնում էր, որ «ճշմարիտ ծառայից Աստուծոյ ոչ է օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանաց»[4]: Հաշվի առնելով Հայաստանում կաթողիկոսի գերազդեցիկ դերը՝ Սասանյան արքաներն անձամբ էին նշանակում նրան՝ ջանալով կաթողիկոսի միջոցով իրենց ազդեցության տակ պահել Հայաստանը:

Սակայն Սահակ կաթողիկոսը մերժեց հայոց վերջին Արշակունի թագավոր Արտաշեսին գահընկեց անելու վերաբերյալ պարսից դռան առաջարկը: Այն

---

[1] 450 թ. Արտաշատի ժողովին արդեն մասնակցում էին նաև Մոկաց, Ամատունյաց, Անձևացյաց եպիսկոպոսները: Դրանց թիվն հետզհետե ավելացավ: 505 թ. Բաբկեն կաթողիկոսի օրոք հրավիրված ժողովին ներկա էին նաև Պալունիք, Զարեհավան, Տմորիք և Մեհնունիք գավառների եպիսկոպոսները (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 42): Ներսես Բ կաթողիկոսի օրոք՝ 554 թ. գումարված Դվինի երկրորդ ժողովում հիշվում են նաև Գողթն, Ակե, Բուժունիք և ուրիշ գավառների եպիսկոպոսներ (նույն տեղում, էջ 70): 607 թ. Դվինում կայացած ժողովին ներկա էին 50 եպիսկոպոսներ (նույն տեղում, 146-147): Բազմաթիվ էին 725 թ. Մանազկերտ քաղաքում գումարված եկեղացաժողովին մասնակցած եպիսկոպոսները (նույն տեղում, էջ 223-224):

[2] Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատասիրությամբ՝ Ե. Տէր-Մինասեանի, Ե. 1957, էջ 6:

[3] Նույն տեղում, էջ 169:

[4] Նույն տեղում, էջ 170:

ընդունելու դեպքում Սահակը պահպանելու էր կաթողիկոսական իշխանությունը, իսկ իր թոռ Վարդան Մամիկոնյանն արյաց արքայի կամքով նշանակվելու էր «ի վերայ Հայոց զուգահաւասար թագաւորին և համապատիւ»[5]: Վռամ արքան Սահակի փոխարեն կաթողիկոս կարգեց ասորի Սուրմակին, որը Հայոց եկեղեցին պետք է մերձեցներ դեռևս 422 թ. Պարսկաստանի Սելևկիա քաղաքում նեստորականների հիմնած և Սասանյանների հովանավորությունը վայելող կաթողիկոսությանը և կտրեր Արևմուտքի քրիստոնեական աշխարհից: Այդպիսով Հայոց եկեղեցին շեղվելու էր իր դավանական ինքնուրույն ուղեծրից՝ ի վնաս ազգային-պետական ինքնուրույնության: Դա հարվածելու էր նաև նախարարների ինքնավար իրավունքներին: Ուստի Սուրմակի աթոռակալելուց մեկ տարի հետո նախարարների խնդրանքով Վռամ արքան հայոց կաթողիկոս նշանակեց մեկ այլ ասորու՝ Բրքիշոյին, որի նեստորամետ վարքագծից դժգոհ հայ նախարարները դիմեցին Վռամին՝ խնդրելով կաթողիկոս նշանակել ուրիշ անձնավորության՝ պայմանով, որ վերջինս պահպաներ հայոց դավանանքը և սովորու-թյունները: Նախարարների կեսը խնդրում էր կաթողիկոս կարգել Սահակին[6], ուստի Վռամը Սահակին ճանաչում է որպես Հայոց եկեղեցու գլուխ կարգված Շմուել ասորու կաթողիկոսակից՝ նրան թողնելով մի քանի գյուղերում վարդապետելու և ձեռնադրության իրավունք, իհարկե, Շմուելի համաձայնությամբ[7]:

Սահակի միջնորդությամբ բավարարվեցին նախարարների պահանջները: Առաջին հերթին, նրանց գահերի կարգը վավերացնող փաստաթուղթը՝ Գահնամակը, պահպանվելու էր այնպես, ինչպես հաստատվել էր տակավին Սասանյան առաջին արքա Արտաշիրի (224-239) օրոք, և Հայաստանի պարսիկ մարզպաններն այն չպիտի փոփոխեին «ըստ կամաց իւրեանց»[8]:

Մովսես Խորենացու Պատմության ԿԸ (68) գլխի երկրորդ մասը, որ սկսվում է «Վարդապետք տխմարք և ինքնահաճք» դարձվածով, անշուշտ, հետագայի հավելում է: Ենթադրվում է, որ այն ոչ թե որոշակի իրավիճակի նկարագրություն է, այլ ունի ապագայի գուշակության բնույթ, քանի որ չի աղերսվում Խորենացու երկասիրության բովանդակությանը և ոչ էլ Ե դարի պատմությանը[9]:

Ողբի մեջ մուծված այդ հատվածը, հավանաբար կատարվել է ԺԴ դարում, կաթոլիկ քարոզիչների (ունիթորների) ձեռքով, որոնք արհամարհում էին հայ գրականությունը՝ «անարգելով ամեն ինչ, որ հայկական է՝ ծես, սովորություն

---

[5] **Մովսեսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ՝ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 348:*

[6] *Նույն տեղում, էջ 349:*

[7] *Նույն տեղում, էջ 350:*

[8] *Նույն տեղում, էջ 352:*

[9] **Սարգսյան Գ.,** *Մովսես Խորենացու Ողբը նոր մեկնաբանությամբ (Պատմա-բանասիրական հանդես), 1997, - 1, էջ 119-120:*

և այլն»[10]: Նրանք հայության մեջ մեծ հեղինակություն վայելող Խորենացու երկասիրության (որը նաև դասագիրք էր) այդ գլխում խցկել են նշված հատվածը, որտեղ «հայ ժողովուրդը ներկայանում է մեզ որպես մի հրեշ, իր բոլոր խավերը ախտավոր են...»[11]: Եվ, նրանց կարծիքով, միարարական (ունիթորական) շարժումն էր, իբր, փրկություն բերելու հայ ժողովրդին: Բայց որովհետև այդ շարժումը Խորենացուց բաժանված էր երկարատև ժամանակով, ուստի նշյալ հատվածը պետք է վերաբերեր հեռավոր ապագային՝ գուշակության ձևով:

Հայրենասեր պատմիչը, որքան էլ հուսաբեկված լիներ իր ուսուցիչների մահվան պատճառով, հայրենակիցներին նման ձևով չէր ներկայացնի, քանզի տեսնում էր, որ պահպանվում է երկրի ինքնուրույնությունը ի դեմս նախարարությունների և Եկեղեցու: Ան-շուշտ, Խորենացու ժամանակ, Սասանյան դռան կրոնահալած ձեռնարկումների պատճառով, խրախուսվում էր հավատուրացությունը: 447 թ. Շահապիվան ավանում (որը ժամանակին եղել է Հայոց թագավորների բանակատեղին) հրավիրված ժողովում ընդունված կանոնների նախաբանում շեշտվում է, որ Սահակի ու Մաշտոցի վախ-ճանվելուց հետո «յերկրէս լինէր եղծումն և քայքայումն կարգաց և աւրինաց սրբոյ եկեղեցւոյ... որք էին ի ժամանակին նախանձա-խնդիր վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք... ոչ գնային ըստ սրբութեան արդար ճանապարհին»: Եվ որ՝ «մարդիկ յանաւրէնութիւն դարձան»[12]: Սակայն երկիրը պահպանում էր իր կենտրոնակ ուժերը՝ հայրենասեր հոգևորականությունը և ազատանին, որոնց միասնությունը ցայտունորեն դրսևորվեց նույն ժողովում մասնակցող «իշխանք ամենայն գաւառատեարք, գաւառակալք պետք, բռնաւորք, զաւրագլուխք, հազարաւորք, կուսակալք, ազատք կողմանք կողմանք, աւագ նախարարք աշխարհին Հայոց՝ որք էին նախանձախնդիր աւրինաց եւ սրբութեան»: Ելնելով երկրում ստեղծված իրավիճակից, նախարարները հոգևոր հայրերին հավաստեցին, որ Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Սահակի ու Մաշտոցի սահմանած կարգերը հաստատվելու դեպքում «որպէս եւ ձեր կամք են, եւ մեք կամաւք եւ ախորժիւք յանձն առնումք»[13]: Մովսես Խորենացու կենդանության տարիներին Հայոց եկեղեցին, ի հեճուկս Սասանյանների վարած քաղաքականության, շարունակեց պայքարը զրադաշտականության և աղանդավորության ու հավատուրացների դեմ: 444 թ. Ս. Էջմիածնում գումարված եկեղեցական ժողովում կաթողիկոս ընտրվեց Սահակի ու Մաշտոցի աշակերտ Հովսեփ Հողոցմեցին: Այդպիսով Հայ եկեղեցին վերածվեց ընտրովի Ազգային իշխանության: Նրա հիմքերը չսասանվեցին անգամ Հազկերտ Բ-ի (439-457) ձեռնարկած ծայրահեղ

---

[10] **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. Դ, Ե., 1970, էջ 404:*

[11] **Ադոնց Ն.,** *Երկեր, հ. Բ, Ե., 2006, էջ 339:*

[12] *Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 425-426, 428:*

[13] *Նույն տեղում, էջ 427-428:*

միջոցառումների ժամանակ՝ 449-451 թթ.: Եկեղեցին իր մեջ ուժ գտավ սասանյան օրենքներին, իշխող կրոնին՝ զրադաշտականությանը հակադրելու քրիստոնեական իրավահայեցողությամբ կյանքի կոչված ազգային օրինակարգն ու կանոնական իրավունքը: Հենց Եկեղեցու և նախարարների պայքարի շնորհիվ էր, որ Ե դարի ժողովրդաազատագրական պատերազմներում հայ ժողովուրդը կարողացավ դիմակայել Սասանյանների նվաճողական նկրտումներին: Հայրենավանդ հոգևոր արժեքներին հավատարիմ էին նաև նախարարները: Հազկերտի նստավայր Տիզբոնում տեղակայված հայկական զորամասերի ազատագնյա ռազմիկները պարսից զորականների ներկայությամբ կատարում էին քրիստոնեական պաշտամունքը[14]: Նախարարներից շատերը «զգիրս սուրբս ուսեալ էին ի մանկութենէ»[15], վկայում է Եղիշեն:

Եկեղեցին ոգեշնչում էր ժողովրդին՝ պայքարելու Հայրենիքի դեմ դավեր նյութող ուժերի դեմ: «Ամենեքեան, - գրում է պատմիչը, - զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռքին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց»՝ պատրաստվում էին ի մահ կանգնելու հայրենի սրբություններն ու քրիստոնեական հավատը պաշտպանելու համար[16]: 450-451 թթ. ժողովրդաազատագրական պայքարի ժամանակ հայերն «այրէին կիզուին զտունս պաշտաման կրակի: Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն»[17]: Վասակ մարզպանը, անհեռանկար համարելով հզոր ախոյանին դիմագրավելը, ջանում էր խաղաղեցնել ապստամբներին: Այդ նպատակով նա հույս ուներ «միաբանութիւն եպիսկոպոսացն քակտեսցէ ի նախարարացն»[18]: Սակայն Ավարայրի ճակատամարտում մարտնչող ապստամբների հետ էին Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և շատ ուրիշ հոգևորականներ[19]: Մարտի նախօրյակին Վարդան զորավարը զորքին կոչ արեց առանց երկնչելու պա-տերազմել «ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն...»[20]:

Ավարայրի ճակատամարտից հետո Վասակ մարզպանը ձերբակալեց և Սյունիքի բերդերում փակել տվեց Հովսեփ կաթողիկոսին, Ղևոնդ երեցին և երեք ուրիշ հոգևորականների: Նրանք բոլորն էլ Սահակի ու Մաշտոցի շնորհաշատ աշակերտներն էին, որոնց Վասակը հանձնեց պարսից զորագլուխներին: Տիզբոնի բարձրագույն ատյանում մահավճիռ կայացվեց այդ հոգևորականների նկատմամբ: Եղիշեի վկայությամբ, դատաքննությանը ներկա նախարարները նշված հոգևոր այրերից բաժանվում էին «յորդառատ

---

[14] Եղիշե, էջ 16:
[15] Նույն տեղում, էջ 22:
[16] Նույն տեղում, էջ 57-58:
[17] Նույն տեղում, էջ 68-69:
[18] Նույն տեղում, էջ 82:
[19] Նույն տեղում, էջ 113:
[20] Նույն տեղում, էջ 102:

արտասուօք»[21]: Եկեղեցու այդ հայրերը տաժանամահ արվեցին 454 թ. հուլիսին, իսկ 37 նախարարներ դատապարտվեցին աքսորի և միայն տասը տարի հետո վերադարձան հայրենիք:

Սասանյաններին չհաջողվեց վերացնել Հայաստանի ներքին ինքնավարությունը, ուստի նրանք շարունակեցին հալածանքները հայ նախարարների և Եկեղեցու նկատմամբ՝ հովանավորելով ուրացողներին, որոնք՝ «ի պարսկաց զտանուտէրութիւնն գնեալ ուրացութեամբ ըստ անարժանութեանն, և ոչ տիրացեալք աստուածապաշտութեամբ իբրև զարժանաւորս, արք անմիտք և վնասակարք... վատք և ոչ քաջք...»[22]: Սասանյան արքաները հույս էին ակնկալում այդ հացկատակների միջոցով վերացնել Հայոց տանուտիրական իրավունքը, խարխլել նախարարական համակարգի, իհարկե, նաև Եկեղեցու հիմքերը և Հայաստանը վերածել Պարսկաստանի սովորական մարզի՝ զրկելով ինքնուրույնությունից: Այդ սպառնալիքի դեմ համախմբվեցին ազատանին և հոգևորականությունը՝ Վարդանանց ավանդներին հավատարիմ Գյուտ Արահեզացի կաթողիկոսի (461-471) գլխավորությամբ: Գյուտը երկիցս դիմեց Բյուզանդիայի Լևոն կայսրին (457-477)՝ օգնություն ստանալու և ապստամբելու մտադրությամբ, բայց կայսրը, խոստումներից բացի, որևէ քայլի չդիմեց: Պերոզ արքան, տեղեկանալով Գյուտի մտահղացումների մասին, 471 թ. աթոռընկեց արեց նրան[23]:

Բանսարկուները արյաց արքայի առջև ամբաստանում էին նաև Վահան Մամիկոնյանին և նրա եղբայրներին, կամենալով «կորուսանել» նրանց՝ արյաց արքային իրազեկելով, «թէ ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կալ ի Հայս»[24]:

Բայց 482 թ. հայրենասեր ազատանին համախմբվում է Վահանի շուրջ և ամրանալով կաթողիկոսանիստ Դվինում՝ պարզում է ապստամբության դրոշը՝ զորավիգ ունենալով Հայոց եկեղեցին՝ Հովհան Մանդակունի կաթողիկոսի գլխավորությամբ: Նախարարները, ազատանու մյուս խավերը՝ «ամենեքեան, - գրում է ժամանակակից Ղազար Փարպեցին, - միաբանութեամբ քրիստոնեայքն և ուրացեալքն» Սուրբ Ավետարանի վրա կատարած ուխտադիր երդմամբ հավաստում են հավատարմությունը քրստոնեական հավատին[25]: Տեղեկանալով ապստամբության մասին՝ պարսիկ մարզպանը և զորապետը գիշերվա քողի տակ «փախստեայ գնային ի կողմանս Ատրպատականի»[26]: Հայաստանի կառավարիչ («մարզպան») ընտրված Սահակ Բագրատունու և սպարապետ Վահան Մամիկոնյանի

---

[21] Նույն տեղում, էջ 156:

[22] **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրությամբ՝ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904, էջ 111:

[23] Նույն տեղում, էջ 112-113:

[24] Նույն տեղում, էջ 116:

[25] Նույն տեղում, էջ 119-120:

[26] Նույն տեղում, էջ 121:

գլխավորությամբ 482 և 483 թթ. հայերը փայլուն հաղթանակներ տարան պարսից զորքի դեմ՝ սպանելով նաև Հայաստանի պարսիկ մարզպանին[27]:

Հայ զորայինների բանակատեղիում էր նաև Հովհան կաթողիկոսը[28], նրա ներկայությունը ոգեշնչում էր հայ ազատամարտիկներին, որոնք արիաբար մարտի էին նետվում հանուն հայրենի երկրի ու քրիստոնեական կրոնի:

Ընդհարումները շարունակվում են: Պարսից Միհրան զորապետը (հավանաբար, Արշակունիների մի ճյուղի՝ Միհրանյանների շառավիղներից էր) քանիցս հաշտության առաջարկներ է անում Վահանին, որը հայտնում է, որ եթե սասանյան տիրակալը հետամուտ է հաշտության, թող «նախքան զամենայն՝ զքրիստոնեութիւն շնորհէ աշխարհիս Հայոց» և դադարեցնի անարժաններին հովանավորելը[29]: Ընդհարումները չեն դադարում: Հայաստանի նոր մարզպան Հազարավուխտն ի զորու չեղավ հնազանդեցնել ապստամբներին: Նրա փոխարեն Պերոզ թագավորը մարզպան նշանակեց Շապուհին, որը Միհրանյան տոհմից էր[30]: Կողմերի միջև պայքարը շարունակվեց մինչև Պերոզի սպանվելը՝ հեփթաղների դեմ Միջին Ասիայում մղած կռիվներում: Շապուհ մարզպանը զորքը հանեց Հայաստանից: Վահանը ուխտապահ նախարարների հետ ժամանեց Վաղարշապատ և «կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ Եկեղեցւոջն Կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զինացեալ գործ նախնեացն իւրոց»: Ապա նրանք մեկնեցին Դվին՝ «դադարեալ անդ աւուրս՝ սպասէին և ակն ունէին հրամանի առաջնորդութեանն Քրիստոսի»[31]:

Պերոզին հաջորդած Վաղարշը հայերի նկատմամբ հանդուրժող էր: Նա բավարարեց Վահանի գրեթե բոլոր պահանջները՝ «ամենայն Արեաց աւագանւոյն» ներկայությամբ հայտարարելով՝ «Տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև ցյաւիտեանս»[32]: Արյաց տիրոջը Վահանի առաջադրած պահանջներից առաջինը հայերին հավատափոխ չանելը և հավատուրացներին գահեր ու պատիվներ չշնորհելն էր:

Սասանյան դռան հետ երկար սպասված հաշտությանը հասնելուց հետո Վահան Մամիկոնյանը «ամենայն ուխտապահ նախարարօքն Հայոց» վերադարձավ հայրենիք՝ առաջին հերթին այցելելով Ս. Էջմիածին, որտեղ նրանց դիմավորեց Հովհան հայրապետը՝ հոգելից օրհնաբանությամբ: Վահանը զինակիցների հետ «կատարէին զուխտս և զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն Կաթողիկէի, և ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց

---

[27] Նույն տեղում, էջ 124: Տե՛ս նաև Պատմութիւն **Սեբեոսի**, աշխատասիրությամբ՝ Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 66:

[28] **Ղազար Փարպեցի**, էջ 128-130:

[29] Նույն տեղում, էջ 138:

[30] Նույն տեղում, էջ 146:

[31] Նույն տեղում, էջ 157:

[32] Նույն տեղում, էջ 174-175:

կուսանաց»[33]: Վերստին դրսևորվեցին Եկեղեցու և ազատանու սերտ միասնությունն ու գաղափարական ընդհանրությունը:

Երկիրը նոր վերելք ապրեց նաև հաջորդ՝ 485 թ., երբ Վաղարշ արքայի հրովարտակով Հայաստանի մարզպան նշանակվեց Վահան Մամիկոնյանը: Այդ առթիվ հոծ բազմությունը ցնծությամբ դիմեց Ս. Էջմիածնի Մայր եկեղեցի, որտեղ Հովհան կաթողիկոսը վերստին հնչեցրեց հոգևորոգ աղոթքը՝ օրհնաբանելով նոր հաղթանակը[34] և արտահայտելով ժողովրդի բոլոր խավերի կամքն ու միասնությունը: Վերստին դրսևորվեց Հայոց եկեղեցու կողմից նախարարական պետականությանը զորակից լինելու հոգևոր հավատամքը: Եկեղեցու և նախարարական իշխանությունների միասնությունը շարունակվեց նաև Վահանին հաջորդած եղբոր՝ Վարդի մարզպանության և Հովհան Մանդակունուն հաջորդած Բաբգեն Ողմսեցի կաթողիկոսի ժամանակ (490-516): Վերջինիս օրոք՝ 506 թ. Դվինում հրավիրված եկեղեցական ժողովին մասնակցում էին նաև Կամսարական, Բագրատունի, Ամատունի, Խորխորունի, Սյունի, Ռշտունի և ուրիշ տոհմերի ավագ նախարարներ[35], որոնք իրենց համաձայնությունը տվեցին նեստորականության դեմ ուղղված ժողովական թղթին[36]:

Եկեղեցու և նախարարների միասնական դիրքորոշումն արտահայտվեց նաև Պարսկաստանի միաբնակ քրիստոնյաներին ուղարկված՝ ոչ ժողովական «հաւատոյ նամակում», որի հեղինակներ են նշված՝ «Բաբգէն Հայոց կաթողիկոս և ամենայն եպիսկոպոսունք, և Վարդ Մամիկոնեան... և իշխանք և նախարարք»: Այդ նամակում ևս կոչ էր արվում հավատարիմ մնալ քրիստոնեական նախնավանդ դավանությանը և մերժել նեստորականությունը[37], որը դեռևս հովանավորվում էր սասանյան դռան կողմից: Սակայն Հայ եկեղեցին նախարարների զորակցությամբ հավատարիմ մնալով իր ակունքներին՝ շարունակեց դիմակայությունը Սասանյաններին, որոնք Կավատ Ա թագավորի (488-531) օրոք վերստին փորձեցին հայերին պարտադրել կրակապաշտություն, սակայն զուր անցան նրանց ջանքերը: Կավատը Բյուզանդիայի դեմ իր սանձազերծած պատերազմի ժամանակ

---

[33] **Ղազար Փարպեցի,** *էջ 176: Վահանանց տարած հաղթանակը դրական ներգործություն ունեցավ նաև Հայկազանց օրրան Արցախ-Ուտիք հայ աշխարհում V-VI դդ. սահմանագծին, Վաչագան Բարեպաշտի օրոք, որն ընդդեմ հեթանոսության դիմեց կտրուկ միջոցների (տե՛ս* **Մովսես Կաղանկատուացի,** *Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությամբ՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 47):*

[34] **Ղազար Փարպեցի,** *էջ 178,* **Սեբէոս**, *էջ 67, տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 1495, թ. 141 բ:*

[35] *Գիրք թղթոց, էջ 42:*

[36] *Նույն տեղում, էջ 47:*

[37] *Նույն տեղում, էջ 46-47:*

նույնիսկ փորձեց հայերին գրավել իր կողմը՝ խոստանալով, որ «չի ստիպի կրակապաշտություն ընդունել»[38]:

Բյուզանդիան ևս, հավատարիմ իր նվաճողական նկրտումներին, ամեն կերպ ջանում էր հայերին մասնակից դարձնել դրանց իրագործմանը: Նրա առջև կանգնած էին հայ նախարարների ճնշող գերակշռությունը և Եկեղեցին, ուստի կայսրությունը հարկ եղած դեպքում չէր վարանում պատժիչ քայլեր ձեռնարկել նրանց դեմ: 541 թ. բյուզանդական զորքը թափանցում է Հայաստանի պարսկական մասը՝ ավարառության մատնելով շատ բնակավայրեր, «գերեվարելով բազմաթիվ հայերի», վկայում է հույն պատմագիրը[39]: Այդուամենայնիվ, ընդհուպ մինչև 554 թ. Հայոց եկեղեցին դեռևս չէր բաժանվել Բյուզանդական եկեղեցուց: Սակայն 553 թ. Կոստանդնուպոլսում Հուստինիանոս Ա կայսեր գումարած 5-րդ տիեզերաժողովը հաստատեց 451 թ. Քաղկեդոնում կայացած չորրորդ տիեզերաժողովի որոշումները, այդ թվում՝ Լևոն պապի առաջադրած հավատո բանաձևը, որոնք ընդունելու դեպքում Հայոց եկեղեցին կախման մեջ էր ընկնելու Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցուց՝ որդեգրելով քաղկեդոնական դավանանքը: Ուստի 554 թ. Դվինում հրավիրված ժողովում, որտեղ վերստին դրսևորվեց Եկեղեցու և նախարարների միասնությունը, շեշտվեց Հայ եկեղեցու դավանական ինքնորոշումը՝ մերժելով նեստորականությունը, իբրև Քրիստոնեության հանդեպ թշնամական հոսանք, և հավաստվեց «կալ ի նմին ուխտի հաստատուն որպէս արարաք և գործեցաք հանդերձ Աստուծով, յաղագս սրբոյ հաւատոյ խոստովանութեան»[40]:

Այդպիսով Հայ եկեղեցին ժողովրդին կոչ է ուղղում չշեղվել ուղղադավան հավատքից, որով առաջնորդվել են՝ «հանդերձ Աստուծոյ», այն է՝ ճշմարիտ ու սրբասուրբ ճանապարհով, ի հեճուկս ոչ միայն նեստորականության, այլև Բյուզանդիայի քաղկեդոնական եկեղեցու որդեգրած երկաբնակության: Դրանով իսկ Եկեղեցին ամրապնդում էր իր ինքնուրույնության հիմքերը, ժողովրդի անխորտակ հավատն ու աննկուն ոգին՝ չեզոքացնելով օտար ու իր ոգուն խորթ հարանվանությունների գաղափարական ազդեցությունը՝ ապահովելով հայ ժողովրդի հոգևոր փրկությունը:

Քրիստոնեական կրոնի, Արևելքում նրա զորեղ պահապանի՝ Հայոց եկեղեցու դեմ հալածանքները շարունակվում էին նաև Սասանյանների կողմից: Այդ հողի վրա 571 թ. հայերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ վերստին ապստամբում են և ջախջախում Դվին խուժած պարսից զորքին՝ սպանելով Սուրեն մարզպանին[41]: Ի պատասխան հայերի օգնության կոչի, Բյուզանդիայի Հուստինոս Բ կայսրը (565-578) և Հովհան

---

[38] *Ասորական աղբյուրներ, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Հ. Մելքոնյանի, Ե., 1976, էջ 164:*

[39] **Պրոկոպիոս Կեսարացի,** *թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հր. Բարթիկյանի, Ե., 1967, էջ 29:*

[40] *Գիրք թղթոց, էջ 74:*

[41] **Սեբէոս,** *էջ 67, Ասորական աղբյուրներ, հ. Ա, էջ 389-390:*

Սքոլաստիկոս պատրիարքը խոստանում են զորակից լինել ապստամբներին՝ պայմանով, որ Հայ եկեղեցին ընդուներ քաղկեդոնական դավանանքը: Կայսրության հետ հայերի ռազմաքաղաքական դաշինքն ապահովելու համար Կ. Պոլիս հրավիրված Վարդան Մամիկոնյանը և Հայոց կաթողիկոս Հովհաննես Գաբեղենցին ընդունում են երկու եկեղեցիների դավանական միության վերաբերյալ առաջարկը՝ հաղորդվելով կայսեր հետ[42]: Ստեփանոս Տարոնեցին գրում է, որ Վարդան Մամիկոնյանը հաղորդվում է կայսեր հետ, որը Ս. Սոֆիա տաճարի ավագ դուռը կոչել է տալիս «Դուռն Հայոց» անունով[43]:

Սակայն հայ հոգևորականները հիմնականում դեմ էին դավա-նական միությանը և կտրուկ կերպով սպառնացին Հովհաննես Գաբեղենցուն ու նրան ուղեկցող եկեղեցականներին, որ՝ եթե նրանք ընդունեն քաղկեդոնականություն, վտարվելու են Հայոց եկեղեցուց[44]: Ուստի Հովհաննես կաթողիկոսը կայսեր հորդորով չվերադարձավ Հայաստան: 574 թ. նա վախճանվեց Կ. Պոլսում:

Հայ և բյուզանդական եկեղեցիների միջև դավանական միության շուրջ վեճերը շարունակվեցին կայսրության և Պարսկաստանի միջև 571-591 թթ. մղվող պատերազմի ողջ ընթացքում[45]: Հայ Եկեղեցու վիճակը հատկապես ծանրացավ պարսից Խոսրով Բ Փարվեզ թագավորի գահակալման առաջին տարում՝ 591 թ., երբ վերջինս իր զորապետ Վահրամ Չուբինի ապստամբությունը ճնշելու հույսով օգնություն խնդրեց Մավրիկիոս (Մորիկ) կայսրից: Բյուզանդական զորքի օգնությամբ այդ ապստամբությունը ճնշվեց, ինչի դիմաց Խոսրով թագավորը Բյուզանդիային զիջեց Հայաստանի մեծ մասը, որտեղ կայսրը հիմնեց քաղկեդոնածես Մայր աթոռ՝ Ավան գյուղա-քաղաքում: Դրան հետևեց Մորիկի կարգադրությունը՝ Հայաստանի բոլոր եկեղեցիներում քարոզել քաղկեդոնյան հավատո հանգանակը և հայերին «միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւր»[46]: Այդպիսով Հայաստան թափանցած բյուզանդական զորքի միջամտությամբ իրականացվելու էր հայերի դավանափոխությունը, ինչը դյուրացնելու համար կայսեր հրամանով հայկական զորագնդերը նետվեցին Թրակիա՝ ավարների դեմ պատերազմելու:

---

[42] Ասորական աղբյուրներ, հ. Ա, էջ 391-392 : Տե՛ս նաև **Garitte G.,** *La Narratio de rebus Armeniae. Ed. Critique et commentaire. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, t. 4, Louvain, 1952, p. 37-38.*

[43] **Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ),** *Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ 1885, էջ 85:*

[44] *Chronique de Michel le Syrien. t. II. Ed. et trad. en francais par J. Chabot, Paris. 1901, p. 305.*

[45] **Garrite G.,** *նշվ. աշխ., էջ 38-39.*

[46] **Սեբէոս,** *էջ 91:*

Սակայն հայ ժողովուրդը չհամակերպվեց ստեղծված կացությանը՝ մերժելով իրեն պարտադրված միությունը[47]: (Բյուզանդական կողմը 591 թ. հետո միակողմանիորեն պահպանեց այն):

Սասանյան դուռը շահագրգռված էր Հայոց եկեղեցու քաղկե-դոնամերժ դիրքորոշմամբ, քանզի այն հայերին կտրում էր Բյուզանդիայից: 607 թ. գարնանը պարսից արքան Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունուն ուղարկում է Հայաստան՝ Հայ եկեղեցու դավանական դիրքորոշումը պարզելու համար: Սմբատը Դվինում գումարել է տալիս եկեղեցաժողով, որը պետք է ընդուներ քաղկեդոնականությունը մերժող հավատո բանաձև և ապացուցեր, թե Հայոց եկեղեցին որքանով է հավատարիմ մնում «յուղիղ և ճշմարիտ հաւատոց... և ի խոստովանութենէ սրբոց Հարցն, զոր հաստատեցին (ի) մեզ»[48]: Ընդ որում, Դվինի ժողովը կայացել է նաև «ի սատարելոյ այլոց նախարարացն»[49], գրում է Ուխտանես պատմագիրը: Ժողովը պետք է ընտրեր նաև նոր կաթողիկոս: Այդպիսով հրատապ խնդիրների լուծումը կատարվում էր ոչ միայն սասանյան դռան, Սմբատ Բագրատունու, նախարարների եպիսկոպոսների հայեցողությամբ: Սմբատը, թեև հանդես էր գալիս իբրև պարսից դռան ներկայացուցիչ, սակայն, ըստ էության, հետամուտ էր Հայաստանի ներքին ինքնուրույնության և Եկեղեցու անկախության պահպանման խնդիրներին: «Բարեպաշտ ամենագով մարզպանն Սմբատ, - գրում է նույն պատմագիրը, - որ զի թէպէտ և թագաւոր չէր աշխարհիս Հայոց, այլ նա լնոյր զպակասութիւն թերութեան թագաւորի»[50]: Նույն ժողովում Սմբատ Բագրատունուն է հանձնվում «Դավանական ձեռնարկ» («Դավանական երաշխիք», կոչված փաստաթուղթը[51], որով հավաստվում էր Հայոց եկեղեցու ինքնագո դավանանքը, հետևաբար՝ անկախությունը Բյուզանդական եկեղեցուց:

Դվինի այդ ժողովի ազդեցությունը զգալի էր նաև Հայաստանի բյուզանդական հատվածում, իհարկե, Սմբատի խորահմուտ խորհրդական Վրթանես Քերթողի ջանքերի շնորհիվ: Այդ հատվածի հայ հոգևորականները դավանաբանական ձեռնարկ են հանձնում Աբրահամ կաթողիկոսին՝ «ի միաբանութենէ աշխարհիս Հայոց»՝ նզովելով բոլոր հերձվածները «և զչար ժողովն Քաղկեդոնի, և զպիղծ տոմարն Լևոնի»[52]: Դա, անշուշտ, վկայում էր Հայոց եկեղեցու ազդեցության ընդլայնման մասին: Սասանյան տիրակալը իբրև թե հրաման է արձակում, որով Պարսկաստանի բոլոր քրիստոնյաները

---

[47] *Գիրք թղթոց, էջ 108:*

[48] **Ուխտանէս եպիսկոպոս,** *Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, հատուած Երկրորդ, էջ 54:*

[49] *Նույն տեղում, էջ 55:*

[50] *Նույն տեղում:*

[51] *Նույն տեղում, էջ 56-57:*

[52] *Նույն տեղում, էջ 63-65: Դա տեղի է ունեցել 609 թ., երբ պարսից զորքերը գրավեցին Հայաստանի բյուզանդական բաժնի զգալի մասը, այդ թվում նաև Կարինը:*

պետք է «հաւատ Հայոցն կալցին»[53]: Նույն թվին Խոսրով Բ-ի հրամանով նեստորականներին արգելվեց կաթողիկոս ընտրել[54]: Հայաստանի պարսկական բաժնի հայ նախարարները պահպանեցին իրենց իշխանությունը: Հայոց եկեղեցին, հավատարիմ մնալով իր դավանական ինքնորոշմանը, նաև ջանում էր չանջրպետվել քրիստոնեական աշխարհից: Ուստի 631 թ. սեպտեմբերի 14-ին, երբ Բյուզանդիայի Հերակլ կայսրը վերագրավեց Երուսաղեմը և այնտեղ վերստին հաստատեց Քրիստոսի խաչափայտը[55], Հայոց եկեղեցին ի սրբազնագործում այդ հաղթանակի, սահմանեց Խաչվերացի տոնը՝ անտեսելով դավանաբանական խտրությունները:

Այդպիսով Հայ եկեղեցին Արշակունիների Հայոց թագավորության վերացումից հետո էականորեն նպաստում է Երկրի հոգևոր և քաղաքական միասնությանը, նրա պետականության պահպանմանը և ժողովրդի իրավակեցության կայացմանը՝ թևավորելով նրա հոգևոր-քաղաքակրթական առաջընթացը, միշտ ելնելով ազգի հավաքական շահերից: Եկեղեցին ժողովրդի հետ էր նրա մղած անհավասար մաքառումների, ազատագրական պայքարի բախտորոշ պահերին՝ որպես Հայաստանի ներքին ինքնուրույնության զորեղ ու կենսունակ պահապան:

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ КАК ОПОРА НАХАРАРСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ (428-630-ые гг.)

ВАРДАНЯН В. М.

Резюме

После падения армянского царства Аршакидов (428 г.) армянская государственность сохранялась в лице правящего сословия нахараров–владетельных феодалов. Идеологической опорой нахарарства являлась Армянская апостольская церковь, выступавшая в качестве консолидирующего страну фактора. Она способствовала развитию феодальных отноше-ний, узаконила традиционно сложившиеся порядки, содействуя тем самым историко-культурному прогрессу. Церковь и представители влиятельных княжеских родов решали судьбоносные вопросы, касавшиеся политической и духовной консолидации страны и защиты суверенных прав армянских князей.

---

[53] **Սեբէոս,** *էջ 151:*

[54] **Տէր-Սինասեանց Ե.,** *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորվոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 155:*

[55] **Антиох Стратиг.** *Пленение Иерусалима персами в 614 г., СПб., 1909, с. 65.*

Церковь боролась с сепаратистскими устремлениями знати. Нахарары покровительствовали церквам и монастырям.

Персидские Сасаниды в лице Армянской церкви признали политическую и духовную гегемонию Армении. Благодаря союзу церкви и князей Армения сохраняла свою внутриполитическую и религиозную независимость.

ARMENIAN CHURCH AS A PILLAR FOR NAKHARAR STATEHOOD (428-630)

V. VARDANYAN

Abstract

The Armenian kingdom kept its nakharars /feudal lords/ after the fall of the Arshakunis. The Armenian Apostolic church was ideologically the basis for nakharars and contributed to the consolidation of the country. It fostered the development of relations between the lords, legalized the traditional proper orders and fostered the historical-cultural progress in the country. The church and feudal lords settled the main issues concerning the political and the spiritual consolidation of the country and protected the sovereign rights of the Armenian lords. The church fought the separatist tendencies of lords and was protected by nakharars.

The political and spiritual hegemony in Armenia was recognized by Persian kings in the Armenia church. The church struggled against their aggressive policy and Zoroastrian faith. Hence, Armenia could maintain its independence due to church and feudal lords.